

քան կը կարծուի խմբագրաց և դրա-
դիտաց անոնց :

Բնական է որ այս ընթացքն հաճոյ
չը թուի անոնց որ սովորած են շա-
բաթը մի անգամ մինչեւ ամբողջ
բարձրանալ մարդահաճութեան փու-
լով, անոնց որ միտք չ'ունին և կը-
փափաքեն որ հանճար կարծուին ,
անոնց որ ամեն խնդրոց մէջ անձ-
նական շահու տառաջնորդութեամբ կը
մտնեն և կը անդիմանան որ անհաշտե-
կան լինին , անոնց որ փոքր են և մեծ
կողման իրենց զիրենց , և մերժապէս
ամեն անոնց որ կը զայլարանան երբ ի-
րենց որեւէ մի գործն իւր իրական
արժէքով գնահատուի : Այս ամենն
քաջ գիտեմք , բայց չենք կարող չինք
զահեկանի գնել ո՛չ ալ վաճառել
այն գործն որուն արժէքն է մէկ
դահեկան : Հրապարակաբար մը
պարտաւոր է , բոլոր մեզ , իւր կար-
ծեացը հետ այնպէս վարուիլ ինչպէս
իւր դրամին հետ , այսինքն անտեսա-
ղիտական սկզբունց համաձայն , որ
պէտք չունանկոյն բարոյական :

Ապաքին խեղճ անոնց ընթերցող-
ներ պիտի ունենայ , բնութեամբ առ-
կաք զերծ են այն թերութիւններէ
զոր յիշեցինք վերջ , և մենք պիտի
ստիպուինք մեր սակաւթիւն ընթեր-
ցողոց հետ խօսելու բարոյական ,
գրական գեղեցկանք և երբեմն ալ գի-
տական խնդրոց վրայ :

Այս հանգով կը կարծաւորուեմ որ եմ
ոգնում թեան և անկեղծութեան
կարողացող ազգայնոց քաջակերտութեան
որով միայն պիտի կարողանանք շա-
բաթական Հանդիսին հաւատարմու-
թիւնն , և անշուշտ կը ներուի մեզ
կարծել թէ երկրիական ամենայն
շահդէտ մը պահելու չորս ոգնալիս
և անկեղծ ազգայնոց կը գտնուին
դեռ ազգիս մէջ :

ԿՐՈՆԻԿՈՆ

Կրեւի թէ մեր քաղաքի ծո-
ված ողբին մէջ նախաբանութեան խն-
դիրն երկու շահեկան տեղերու
թեանց , այսինքն մեր և Անգ-
լիոյ աշխարհեանց մէջ վիճելի
մասնաւոր խնդիր մը դարձաւ :
Առջի օր , Բ. Գոնէն հրաման մը
կուտ մեր տեղական կառավար-
ութեան , որ թող ապա Անգլի-
այի ընկերութեան շահեկաններն
առժամանակեայ կերպիւ երթե-
ւեկութեան հանել մինչեւ խնդ-
րոյն երկու տեղութեանց մէջ
վերջնական լուծում մը ստա-
նայը :

Ար խնդրոյ մէջ անիրաւ ե-
լած եւ ո՛ր ձեռքովեղ Արիւն . . . :

Յաւաքի եղբայրութիւն մը կ'ստա-
նուի որ պատահէր է Պուրնա-
պատի մօտ Երզնա Բէջի մէջ :
Տան մը տիկինը բնակարանին
մակերը ջնջելու համար պնակ
մ'ալիւրի մէջ մինչեւ կը խառ-
նէ և ալիւրէն մաս մը խմոր չի-
նելով կը ցրուէ տան առ ու ան
անկիւնները : Պնակին մէջ մնա-
ցած ալիւրը կը գնէ պահարան ,
որիկէ տան սպասարանին տանց
դիտեալով թէ թունախառն է ա-
լիւրը , կ'առնու և ձուկ երկու
կը զարծածէ : Ընտանեաց ան-
դամք բնականաբար առանց գիտ-
նալու , ձուկն ուտելով բոլորն
ալ կը թունաւորուին ինչպէս նա-
եւ սպասարանին : Տան տիկինը
մէկ քանի ժամ վերջ կը մեռնի
և բնականաբար միւս բոլոր ան-
դամք վտանգաւոր վիճակի մէջ
կը գտնուին :

Տան տիկինը և սպասարանի
կը պարտաւորեն զգուշութիւն
արթնութիւն ընել այս տեսակ
պարագաներու մէջ , վտանգի հե-
տեանքը մահ է և ուստի ա-
պաշտան անողուտ :

Մայրաքաղաքին թերթերէն ո-
մանք կը տեսնեն , Իզմիրի Հե-
լէն հիւպատոսին և տեղական
կառավարութեան մէջ հակառա-
կութիւն ծագած է : Սակայն բու-
տոյդ տեղեկութիւն ունինք որ
այդպիսի հակառակութիւն մը
երբեք գոյութիւն չունի , և եր-
կուքին մէջ բարեկամական յա-
րաբերութիւնք կը շարունակեն :

Անցեալ շաբաթ օր Արմանիոյ
կայսեր ծննդեան տարեգարծին
առթիւ , տեղական կառավարու-
թիւնն հարկ եղած պաշտօնական
այլեւթիւնը տուաւ , յիշեալ
տեղութեան տեղեւ դատաւոր հիւ-
պատոսին :

Այս վերջին Արմանիոյ գաղ-
թականութեան նշանաւոր ան-
դամներուն հայկերոյցի մը տը-
ւաւ նոյն գիշեր հիւպատոսարա-
նին մէջ :

Գոնէն թեամբ իմացանք թէ ,
քաղաքիս արտաքին յարաբե-
րութեանց անօրէն ճիշտն է քիչն-
տիկ հիւանդութիւնն օր քան օրէ
թեթեւացող կարգաւորութեան վրայէ :

Տեղեկութիւն մինչեւ Մարաշէջի
կայսրանը չինուելու վրայ եղող
ճանաչում աշխատութիւնք փու-
թով առաջ կը մղուին :

Այդ ճանաչում վրայ բանող
աշխատաւորաց թիւն է հաղար
երկու հարիւր հոգի :

Տեղեկոյ պաշտօնական լրագիրը
կը տեսնենք , կայսրական բժշկա-
կան դպրոցէն վկայագիր չունե-
ցող բժշկաց' արհեստներն ի դործ
դնենք արդիւնաւորութեան մեր
վիճակին մէջ , այդ տեսակ բը-
ժիշկներ քննութիւն անցունե-
լու համար Պոլսի գաղած , և ու-
մանք արդէն վկայագիր ստա-
ցած բլլալով՝ վերադարձած են
մեր գաղածը :

Մուղլայէն կը գրեն թէ , Մէն-
թէշի մէջ Լիւթ Կապուշ քա-
նուելուն համար , որոյց դրա-
մական ժողովութիւններն յա-
մբըշտակներու ձեռք ինքնով
կը կորսուէին : Այս անգամ տեղ-
այն դատաւոր Ֆուսու պէյ նա-
հանգին մէջ տեղ տեղ այդ սըն-
տուկն հաստատէր է , ուր կը
պահուին անոք սրբոյ ժառան-
գական դրամները :

Այս անգամ կը գրեն թէ , Սե-
քի կողմերը երկու անձանց
Չեքքէշեր , քանի մը ճամբորդ-
ներ կողմաւորած բլլալով՝ երբ ժա-
նարմանքու կողմէ կը հալած-
ուէին , տեսնելով որ արդարու-
թեան ձեռքէն պրծնին անհար-
կեղ երկու կը նետեն և անյայտ
կըլլան ջուրերուն մէջ : Անոնց մի-
այն ձին գետին միւս կողմէն ողջ
գուր կըլլէ :

Ասիէ չորս տարի առաջ , Պո-
լսի Դաւաթիոյ Առեւտրական դա-
տարանի նախագահին սպասա-
ւորն սպաննելով փախչող Յու-
սէի անուն հայը՝ քանի մ'օր
առաջ տեղեկոյ ոստիկանութեան
կողմէ քաղաքիս մէջ ձեռք ան-
ցուելով ընտելութեան տակ դըր-
ուած է :

Ուրալէն կը գրեն թէ , ծով-
դերքն երկու յոյն գիտնել
գտնուէր են , որոց վրայ վերջի
նշաններ չեն երեցած :

Ասոնք ցամաքին վրայ սպան-
նուելով ծովը ձգուած բլլալէ ա-
ւել , հաւանական կը կարծուի
որ նաւի մը մէջ սպաննուած կամ
նաւէն ծովը ձգուած և խղճուած
են : Հարկ եղած քննութիւնն

ըր կատարելու համար տեղեկոյ
կառավարութեան կողմանէ գի-
տաբական պաշտօնականը զըր-
կուած են :

Քանի մ'օր առաջ Չեքքէշի մէջ
կրկին երկրաշարժի ցնդումներ
պատահէր են ստորերկրայ սր-
տուներով :

Այս անգամ կ'իմացունեն թէ ,
նոյն նահանգին մէջ այս տարի
ժողոված և ջնջուած մարտիկ
հունտերը վեց հազար այս քան
օխայի կը հասնին : Մեծ յոյս կայ
ուրեմն որ այս տարի ևս հունձ-
քերն աղատ կը մնան այդ սր-
տու հասէն :

Նոյն քաղաքէն լուր կուտան նաեւ
թէ , տեղայն դատարանը մահ-
ուան դատապարտեք է տակ ա-
ռաջ ձերբակալուած Գուլուշա-
ք Շաքի օղլու Ահմէտ , ասոր
ընկերը Քաչար օղլու Ահմէտ ,
նաղէլիցի Տէյի Իպրահիմ և քն-
կերն Ալի անուն աւաղակներն :
Չորս տարի թիւապարտութեան
դատապարտեք է Գուլաթը դիւ-
ղաիկ Մուլա Եուսուֆ օղլու
Մէհմէտ և այլմ' փախտական
եղած օղլու Ալիդ աւաղակները ,
և երեք տարի նոյն պատժոյ՝
Եյուի օղլու Մէհմէտ աւաղակը :

Նիֆէն իմաց տրուեցաւ թէ ,
նոյն քաղաքի մէջ բնակչաց մեծ
մասը Բաշա Կոչուշ հիւանդու-
թեամբ կը տառապին և թէ ու-
մանք ալ կը մեռնին , ուստի
տեղեկոյ կառավարութիւնն ան-
միջապէս հոն զրկեց թաղապե-
տութեան բժիշկ Ֆայիզ պէյն և
մէկ դեղագործ :

Մարմապի նահանգին մէջ ոչ-
խորաց հիւանդութիւն երեւան
եղելը լուր կը տրուի :

Կըսուի թէ երեկ հայ պան-
դուխտ քահանայ մը կողմ-
առու է չորագործներէն , Կո-
ղուցուն է տան և չորս ոսկի :

Նիւթոյ առատութեան պատ-
ճառաւ Պ. Հոյոյի նամակին շա-
րունակութիւնը դաւ անգամուան
յետաձգուեցաւ :

Մեծ Խմբագիր ,
Պատիւ ունիմ ծանուցանել արգոյ
հասարակութեան թէ , երբօրմն Պ.
Յաիր Տալիսթանէ դատաւոր Բլ-
լով բլլալով , և հետեւաբար նորա
փաճառաւոր թէ՛ անցեալ և թէ՛
ներկայ բոլոր գործողութիւնք , այս
ինքն պարտք և պահանջ ամբողջ
վին անոր հաշտոյն անցած բլլալով ,
ստորագրեալ օր և է յարաբերու-
թիւն մը չունիմ այդ գործողու-
թեանց մէջ :

Գաղութիւն Տալիսթան
Իզմիր , 7/19 մարտ 1884

Ա. Մալու մէջ հետեւեալ հատ-
ուածք կը տեսնուի .
« Վիճակագիր » . — Քաղաքիս
Ս. Մետփանոս եկեղեցւոյ ար-
ձանագրութեանց գիւնադպիր
Արթ. Տ. Աւետիս քահանայ Սար-
գսեան հաճած է ուղարկել հե-
տեւեալ վիճակագիրը . 1883ին ,
այս է մէկ տարուան մէջ՝ եղած
և քաղաքիս հայ հասարակու-
թեան մէջ . 41 հարսանիք , 118
ծնունդ և 143 մեռել :

ՆԵՄՊԱՅԻ ԸՆՏԻՐ ՍԵԼԻ ԽԱՎ-
ԵԱՐ , ութուան զրուշ օխան : Կը
ծախուի Եսկի Պալք բաղար փո-
ղոց , թիւ 1 , Պ. Սթէլիանոս Բ.
թերեւտագիրի միջերանոցը :
Դնորդները միշտ դահ եղած են :

THE LONDON PHARMACY



Դ Ե Ղ Ա Ր Ա Ն Ի Օ Ն Տ Օ Ն

Ս. ՄԱՐԻ ԵՒ ԲԵՆԵ
ՍԵՐԱՍԻՍԵՆ ԵՒ ՕՏԱՐ ՔԵՄԻՍԻՍԵՐ

Ի ԶԱՐԻՔՆԵՒ

ՕՐՈՇՈՇ

MOORE'S.—Glycerine and Honey
Jelly : Չեռները , երեսը և մա-
նաւանգ մարմը կակուղցնելու և
տաքեն ու հոլէն առթուած ա-
մեն կերպ արհեստագործութիւնե-
րը անհետացնելու :

MOORE'S.—Effervescing Saline.
Ախորժահամի առողջարոյժ դեղ-
ընդդէմ մաղձային զգացմանց,
անմարտութեան , գլխացաւի և
ստամոքսի ամեն անկարգու-
թեանց :

MOORE'S.—Alcool d'Opheline
Febrifuge Indien : Այս դեղը յանձ-
նարարուած է մասնաւորաբար
այն երկրներուն համար ուր
ընդմիջական տեղերը կ'ախրեն
(fevers intermittentes) :

MOORE'S.—American pick-me-
up Bitters : Այս դեղը ուժարեւր
ստամոքսային և ախորժակաբերէ :

MOORE'S.—Guerison speciale (pa-
tent) : Քոստուռութեան (gale) և ու-
րիշ հիւանդութեանց շանց ու
ճիւղ համար :

MOORE'S.—« Perfected » Huile de
Foie de Morue au proto-Iodure de
Fer : Այս ձկան ելիզ վճիւռ և
անայլայլի է ընդդէմ Պսիլածե-
տութեան Rachitisme խորագա-
րութեան scrofule և մարմնային
արտաթորութեան անհրաժեշտ
դեղ է հիւանդութեան նոր ել-
լոյններուն և տկարակալմ' ման-
կանց համար :

MOORE'S.—Glycerine Cough Eli-
xir : Այս դեղը դաւման է կուրծ-
քի և թոքերու բոլոր անկարգու-
թեանց դէմ և այլն :

MOORE'S.—Patent Delectables
—Iceland moss and Pectoral juices :
Ընդդէմ հալի և մասնաւորապէս
յանձնարարուած ընդդէմ ցըր-
տահարութեան , կոկորդի շնա-
փողի հարաւորի և այլն :

MOORE'S.—Callicura : Դիւրին և
հաւաստի անկարգութիւն կու-
ղուներու :

MOORE'S.—Celebrated Egg Julep
Այս պարզ բաղադրութիւնը որ
հաւկթի դեղնուցով շինուած է
դերազանց է քան ամեն միւս
ոգեխառն ներկերէ (պոյա) և
ընդհանրապէս Hair Washes անու-
նով կը քանդուի (մաղ լուալու) :

MOORE'S.—Terebene Soap Վա-
ղահար նորութիւն այս թուա-
թիւի սալոյնը մօրմը կը կակուղցնէ
և կրկնէ :

MOORE'S.—Quinine Hair Lotion :
Մաղերը լուալու , ուժովքնելու
և թեկերը անհետացնելու հա-
մար յանձնարարուած :

MOORE'S.—Nigricine : Մաղի ներկ
վայրկեանական և անփոփոխ :

MOORE'S.—Rosemary Hair Wash
Գլխու թեկերը անհետացնելու ,
և անոնց գոյութիւնը արդիւն-
համար :

MOORE'S.—Petroleum Pomade.
Այս մասնաւորապէս կը պատուի-
րուի հերթափութեան համար
երբ կ'ախորժուի ըլլայ կամ մա-
ղերը կարծ և տկարացոյ են ,
յայնժամ իւր աղեւաղոր յատ-
կութիւնները երեսն կը ընեն նո-
րաբար մաղերու յորդառատ աճ-
մամբ :

MOORE'S.—Eau de Jouvence
(Doree) : Պարզ ջրոյ պէս անմեղ
հեղուկ մի : Այս հեղանիւթին
գործածութեան մաղերը ատի-
ճանարար այնպիսի ոսկեղոյն
խարտեղութիւն մի կը ստանան
որոյ վերայ տիեզերաբար կ'ըս-
քանչացուի :

MOORE'S.—Chilblain Liniment
անփոփոխ բուժում ուռեցներու :

MOORE'S.—Chilblain Salve :—
խոցոտած ուռեցներու համար :

MOORE'S.—American Bay Rum
Մաղերը բարեկաւար և ճիւս-
ցնելու համար :

MOORE'S.—« Perfected » Huile de
Foie de Morue avec extrait de Malt
Այս ձկան իւղն ալ ամենակա-
տարեալ դեղ է սնունդ է գիր-
նալու համար , գործածելու ե-
ղանակը և համը խիտ-հաճելի և
օգտակար է և արդիւնքն ալ զօ-
րաւոր : Այս ձկան իւղը նորվե-
կոյ Մորիա ձկան լեարդի իւղին
Օձին 50 ծանրութիւնը կը պա-
րունակէ , իւր ներդրումը կը
ուղղակի դեղեկային մանրաթե-
կեց վրայ կ'ազդէ :

Ընդհանուր պահեստատեղի
Լոնտոնական դեղարան
Ս. ՄԱՐԻ ԵՒ ԲԵՆԵ
Ա. Գիլիսոյի քիմիագործի Զմիւռնիս

B. DIOGENIS & C^o

Վ. ՏԻՕԵՆԵՆԻ ԵՒ ԸՆԿ.

ՄԵՐՎՈՒՄ ԴԱՃԱՌԱՀԱՆԻԶ

ԶՄԱՐԱՆ ԵՂԱՆԱԿԵՆ ՄԵՆՅԱՄ

ԲԱԶՄԱԹԻԻ ԲԵՀԵԶԵԱՅ ԿՏՈՐԵՆԲՈՒ

ՍԿԻՍԱՆ 20/5 ՄԱՐՏԻՆ ՄԵՆԶԵՆ 7/19 ԱՊՐԻԼ

Այս վերամանայ Մեծ Վաճառահանգէսին հանուած բոլոր վա-
ճառքները՝ մեր գնորդաց պիտի վաճառուին հին անփոփոխ գնոյց վրայ :

ՀԱՐԻԻԻԻՆ ԳԱՌԱՍՈՒՆ

ԻՐԱԿԱՆ ԶԵՂԱՌՎԱՐ

Տիկնայց , փոքր աղջկանց և տղայոց համար Բաշա-ճանքն ու Մալ-
ները , տղայոց և փոքր աղջկանց համար սրտուեայ և յարդեայ
փեղղայները , արանց , կանանց և տղայոց համար գուլպաները , հո-
լանայներն ու անձրեւանոցներն և այլ զանազան առարկաներ նմա-
նապէս ի վաճառ հանուած են :

Պատուարժան հասարակութեան ուշադրութիւնը կը հրաւիրենք
բոլոր այն վաճառքներուն վրայ , որը իրենց նմանը չեղած աժա-
նութեամբ յայտնի են ամենուն :

Այս վաճառմունք պիտի բլլան կանխիկ վճարելի մէճիւլիւն 33
դրուշ հաշով :

Իզմիր , 17/29 Փետրուար 1884

